ՆԱՄԱԿ ԲԱՔԻՑ

ՖՐԻԴՈՆ ՄԱՐԴԱՆԵԱՆԻ

ԲԻԲԻ-ԷՅԲԱԹԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԻԹԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՌԹԻՒ

Պետական կալուածների և երկրագործութեան մինիստրի թոյլտուութեամբ Բաքուում 16 փետրուարի ներկայ թուականի նշանակուած է աճուրդ Բաքվից երեք վերստ տարածութեան վրայ Բիբի-Էյբաթ կոչուած տեղում գտնուող պետական նաւթային հողերի համար։ Աճուրդի նշանակուած են 29 կտոր հող 135 դեսեատին և 1374 քառակուսի սաժէն տարածութիւն։

Պետական նաւթային հողերի մանաւոր մարդկանց ձեռքով արդիւնագործելու գլխաւոր պայմանները հետեւեալն են, որոնց աւելորդ չենք համարում առաջ բերել, ի նկատի ունենալով այն ահագին շարժումը, որ նկատուում է այդ հողերը աճուրդի դալու առիթով։

1) Աճուրդին մասնակցել կարող են ամեն դասակարգի պատկանող մարդիկ, որոնք քաղաքացիական իրաւունք ունին։

2) Աճուրդին մասնակցողները ծրարում փակած յայտարարութիւն պէտք է ներկայացնեն, որի մէջ նշանակուած պէտք է լինի այն գինը, որ յայտարարողը որոշել է տալ մի որոշ կտոր հողից արդիւնաբերելիք փութ նաւթի համար, սակայն այդ գինը կէս կոպէկից պակաս նշանակել չի կարելի։

3) Յայտարարութեան հետ հանդերձ պէտք է ներկայացնել նախավճար կանխիկ դրամով կամ պետութեամբ ապահովուած տոկոսաբեր թղթերով այն չափով, որ կազմի մի հինգերորդական մասը իւրաքանչիւր փութի համար առաջարկած գնի, բազմապատկած այդ կտոր հողի համար նշանակած մինիմալ քանակութեան վրայ։ Օրինակի համար, դիցուք № X կտոր հողի մինիմալ քանակութիւնն է 100,000 փութ, իսկ առաջարկուած է վճար իւրաքանչիւր փութից 5 կոպ., ուրեմն նախավճար պէտք է ներկայացնել $\frac{100,000 \times 5}{5} = 1000$ ռուբլի։

4) Սկզբնական որոշած գինը պրում է միմիայն նշանակված մինիմալ (նվազագույն) քանակութեան համար, իսկ ապագայում եթէ աւելի արդիւնաբերի, դիցուք երկու կամ երեք անգամ աւելի, քան պարտաւորեցուցիչ քանակութիւնը, այն ժամանակ իրաքանչիւր աւել արդիւնաբերված պարտաւորեցուցիչ քանակութեան չափի վճարը փութից պակասում է $^1/_4$ կոպէկ։ Օրինակի համար № X ֆոտոր հողի պարտաւորեցուցիչ քանակութիւնն է 100,000 փութ, նշանակված է գին 5 կոպ. փութից, իսկ ստացված է նաեւ 400,000 փութ. ուրեմն նա պէտք է վճարի.

ա)	100,000	փութի համար	5	կոպէկ	5000	ռուբլի
բ)	100,000	»	» $4^3/_4$	»	4750	»
գ)	100,000	»	» $4^1/_2$	»	4500	»
դ)	100,000	»	» $4^1/_4$	»	4250	»

Ուրեմն 400,000 փութ արդիւնաբերված նաեւի համար նա պէտք է վճարի 18,500 ռուբլի։ Սակայն այդ պակասելը շարունակւում է մինչև որ կը հասնի կէսի չափին սկզբնական առաջարկած գնի։ Ներկայ դէպքում մինչև $2^1/_2$ կոպէկ, որից կետոյ այլ ևս չի պակասիլ։

5) Աճուրդի ժամանակ ում վրայ հաստատի որոշ ֆոտոր հողը, նա պարտաւոր է մէկ ամսաց ընթացքում այն օրից, երբ լայտնված է նրան աճուրդի հետևանքները, ներկայանալ լեռնային վարչութեան դաշն կապելու՝ ներկայացնելով նաև պետական դանձարանի անդորրագիրը, թէ արդէն լրացուցիչ մինչև կէս տարուայ վճարի գումարը մտցրած է պետական դանձարանը։ Եթէ այդ ժամանակամիջոցին չը ներկայանայ, կամ պետական դանձարան չը մտցնի լիչեալ գումարը, այն ժամանակ ներկայացրած նախավճարը չի վերադարձնւում, այլ գործադրում է լոգուտ պետական դանձարանի։

6. Այն արդիւնաբերողը, որը մի քանի տարի չարունակ գործելուց վեր՝ գտնելով իրա համար ոչ ձեռնտու ներկայ գործը, կամենայ թողնել և հեռանալ,—այդ թոյլ է տրւում, սակայն արդիւնաբերողը իւր գիտաւորութեան մասին պարտաւոր է լայտնել լեռնային վարչութեան մէկ տարի առաջ։ Բայց և այնպէս նա պարտաւոր է այդ վերջի տարուայ վճարը լրիւ մտցնել պետական դանձարանը։

Ահա ներկայ աճուրդի գլխաւոր պայմանները, որը կարծում ենք հետաքրքիր պէտք է լինի մեր ընթերցողների համար։

Ներկայ աճուրդը ըստ երևոյթին կը լինի աւելի բազմամարդ քան՝ առաջիններն էին։ Կարող ենք աւելացնել՝ ոչ միմիայն բազմամարդ, այլ և արտաքոյ կարգի, որովհետև նաեւթարդիւնաբերական գործը ներկայումս մի այնպիսի անկանոն դրութեան մէջ է գտնւում, որի նմանը երբէք չի տեսնված։ Այդ գործի արտաքոյ կարգի չահաւէտութիւնը այն ասպիճան չլացրել է մարդկանց, որ ամեն մէկը աշխատում է և ամենայն ջանք գործ

դնում այնպէս կամ այնպէս մասնակցած լինի այդ աճուրդին։ Սրան պեր-ճախօս ապացոյց կարող է ծառայել այն հանգամանքը, որ տեղային նորակազմ նաւթարդիւնաբերական ընկերութիւններից համարեա թէ ոչ մէկը ազատ փայեր չունի։

Ամեն կողմից լսւում է թէ այստեղ այնտեղ ընկերութիւններ են կազմւում ներկայ աճուրդին մասնակցելու համար։ Այդպէս՝ լսում ենք, որ Պետերբուրգում այդ նպատակով մի ընկերութիւն է կազմւած 20 միլիոն ռուբլի դրամագլխով, Մոսկուայ—10 միլիոն ռ. դրամագլխով, Թիֆլիս 500,000 ռ. դրամագլխով և այլ շատ տեղերում։ Թէ որ ասպիճանի ճիշտ են այդ լուրերը շատ մօտիկ ապագայում կը պարզւի։ Այստեղ Բագու Նէր. Թումանեանները ընկերութիւն են կազմել 2 միլիոն ռուբլի դրամագլխով յատուկ Բիբի-Էյբաթում պետական նաւթային հողեր վերցնելու համար։ Առայժմ ընդունում են 10% այդ դրամագլխի։ Եթէ յաջողւի աճուրդին մի քանի կտոր հող ձեռք բերել, ընկերութիւնը կազմւած կարելի է համարել, իսկ եթէ ոչ—այն ժամանակ կը վերադարձնեն ընդունած 10%-ը։ Իսկ ինչ վերաբերում է տեղային թէ մեծ և թէ փոքր նաւթագործներին, այդ մասին կարող ենք առանց տատանւելու ասել, որ նոքա բոլորովքեան կը մասնակցեն աճուրդին, որովհետև ներկայումս արդիւնաբերւող նաւթային հողերից աւելի ուշադրութեան արժանի են Բիբի-Էյբաթի հողերը, որտեղի ֆոնտանների հոչակը զարմացնում է նոյնիսկ ամերիկացիներին, մեր այդ անլաղթ ախոյեաններին։

Անհաւասիկ այդ հանգամանքները առաջ են բերել մի տարօրինակ իրարանցում։ Լուր է պտտւում թէ մտադրութիւն կայ առաջարկել իւրաքանչիւր փութի համար վճար 7—8 կոպէկ։ Խոստովանում ենք, հէնց այդ հանգամանքը մեզ ստիպում է մի քանի խօսք ասել այդ առթիւ։ Մենք վերը վիշեցինք, որ աւելի ուշադրութեան արժանի նաւթային հողերը գտնւում են Բիբի-Էյբաթում։ Այդ հողերը պէտք է ենթադրել, որ աւելի հարուստ են, որովհետև այստեղ համեմատարար աւելի յաճախ են հորերը ֆոնտան խփում, քան Բալախանի, Սաբունչի կամ Բոմանի, սակայն այստեղ հարկաւոր է աւելի խոր փորել, առնւազն 230—260 սաժէն։ Այդ խորութեան հորեր փորելը տևում է առնւազն $1^1/_2$—2 տարի, հետևապէս հողեր վերցնողը առնւազն երկու տարի չարունակ պետութեան պարտաւոր է վճարել որոշած քանակութեան համար առաջարկած գինը, առանց մի կոպէկ ինքը օգուտ ստանալու։

Աճուրդի այդ եղանակը մենք գտնում ենք միանդամայն վնասաբեր արդիւնագործողների համար, և ահա թէ ինչու։ Նաւթի գինը այժմ 11—12 կոպէկ է փութը։ Եթէ առաջարկելիք աճրդավճարը իւրաքանչիւր փութի համար, ինչպէս այժմ ասում են, 7—8 կոպէկ է, վերածենք բաժնի՝ կը տեսնենք, որ արքունի գանձարանին վճարում ենք արդիւնաբերւած

նաւթից 63—72%։ Ոչ ոք չի ուրանալ, որ ներկայումս նաւթարդիւնաբերական գործի ընթացիկ ծախքերը համարեա թէ կրկնապատկուել, եռապատկուել են։ Արդեօք կարելի՞ կը լինի արդիւնագործի օգտին մնացած 28—37%% ստացած նաւթից հոգալ և ծածկել այդ անագին ծախսերը։ Աւելի քան կասկածելի է։ Վերջապէս ով կարող է մեզ ապահովացնել, թէ նաւթի գինը 11 կոպ. չի իջնիլ։ Այդ մի այնպիսի լուրջ խնդիր է, որի վրայ հարկաւոր է լուրջ ուշադրութիւն դարձնել։

Մենք կարծում ենք, որ եթէ աճուրդ նշանակուէր բաժնից, այդ աւելի նպատակայարմար է, որովհետև բաժինը կապ չունի գնի հետ։ Նաւթի գինը խիստ փոփոխութեան է ենթարկուում։ Դիցուք թէ ես այսօր առաջարկեցի վճար ստացած նաւթի փութին 8 կոպ., իսկ վաղը նաւթի գինը իջաւ մինչև 8 կոպ.։ Արդեօք ինչ գումարների կը հասնի իմ վնասը։ Ինչու արդեօք անյաջողութեան դէպքերը ի նկատի չունենալ։ Մի՞թէ ամեն փորած հորից ֆոնտան պիտի սպասել։ Չէ՞ որ շատ անգամ նոյն իսկ նաւթին հասած հորերը մի հասարակ անզգուշութեան զոհ են լինում և փչանում՝ պատճառելով տիրոջ 50-60 հազար ռուբլի վնաս։ Առհասարակ իւրաքանչիւր արդիւնաբերութիւն սիրում է հաշիւ, նաւթային արդիւնաբերութիւնը աւելի քան միւսները։ Հետևապէս ի նկատի ունենալ միմիայն յաջող հանգամանքները՝ աւելի քան անմտութիւն է։ Եթէ 8 կոպ. առաջարկի, այն ժամանակ պէտք է հաշուել, որ բոլոր փորած հորերից ֆոնտաններ կը ստացուեն և, բացի ընթացիկ ծախքերը ծածկելուց, արդիւնագործը կը շահի։ Բայց եթէ գործը անյաջող գնայ, կամաչ ակամաչ նա կը տուժի։ Իսկ եթէ բաժնից տրուի՝ (այսինքն արդիւնաբերածից մաս տրուի գանձարանին), այն ժամանակ մենք համոզուած ենք, որ 50% աւելի տուղ չի լինիլ, իսկ մնացեալ 50%-ը ծախելով տիրող գներով՝ տէրը միջոց կ'ունենայ ծածկել իւր ծախսերը, իսկ եթէ չը կարողանայ էլ ծածկել, վնասը չնչին կը լինի։ Բայց որոշ աճուրդների դէպքում, որպէս այժմ է յայտարարուած, թէկուզ նաւթի փութը 1 կոպ. դառնայ, արդիւնագործը պարտաւոր է վճարել գանձարանին իւր առաջարկած նախկին գինը։

Բաժնով տալու դէպքում լեռնային վարչութիւնը կարող է նշանակել, թէ որոշ տարիների ընթացքում արդիւնագործը պարտաւոր է այսքան հոր փորել և այս ինչ խորութեամբ, եթէ պակաս խորութիւնում որոշ քանակութեամբ նաւթ ստանալ անկարելի լինի։ Թող նա ունենայ դարձեալ իւր վերահսկողութիւնը։ Ստացած նաւթը արդիւնագործը պարտաւոր է ինքը գնել որոշ գներով, կամ ծախել, իսկ ոչ ուշ ամսի 10-ից նախորդ ամսաչ համար հասանելիք գումարը մտցնել պետական գանձարանը իբր աւանդ (դէպոզիտ) լեռնային վարչութեան, հակառակ դէպքում տուգանքի ենթարկել արդիւնագործին։ Մի խօսքով գործադրել այն պայմանները, ինչ որ տարիներից ի վեր մասնաւոր հողատէրերի հետ գոր-

ծադրում է։ Այդպիսով արդիւնագործին պետութիւնը ազատած կը լինէր մեծամեծ վնասներից։

Վերջացնելով մեր խօսքը մենք աւելորդ չենք համարում ասել և հերևևալը։ Մեզ թւում է, որ մեծ ֆիրմաները հազիւ թէ այդպիսի թանգ գներ առաջարկեն Բիբի-Էյբաթի պետական հողերի համար,—որովհետև ինչպէս տեսաք վնասը ակնյայտնի է և կամ եթէ շահ լինի՝ այն էլ շատ չնչին կը լինի։ Լաւը թէ փութին 8 կոպ. ամբողջաւոր առաջարկողներ են լինելու, հաւանական է որ այն նպատակով տարածւած լինի, որպէս զի ամեն մարդ ամուրդի չմասնակցի, կամ թէ փոքր և միջակ ֆիրմաներից առաջարկողը՝ մի քանի տարուայ սիստեմատիկաբար վնասներին չը դիմանալով՝ թողնի ասպարէզը և հեռանայ. այդպիսով նաւթարդիւնաբերութիւնը կենտրոնանայ միմիայն մեծ ֆիրմաների ձեռքում։ Երանի չէր լինի եթէ սխալւած լինեմ այդ ենթադրութեամբս։ Բայց թողնենք նրանց հանգիստ, 16-ն փետրվարի կը պարզի ամեն ինչ։

28 յունուարի 1899 թ.

Բաղու։